119

Հաստատված է՝
Մեհրաբյանի անվան բժշկական
քոլեջի մանկավարժական խորհրդի
«-------»--------------- 2022թ. նիստում

տնօրեն՝ ______________ Լ.Գ.Մեհրաբյան

ԿԱՐԳ
«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ բժշկական քոլեջի կուրսղեկների աշխատանքի կազմակերպման

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացում հիմնական դերը պատկանում է կուրսղեկին, ով անմիջականորեն պատասխանատու է ուսանողների կազմակերպչական և դաստիարակչական աշխատանքների համար:

1.2. Կուրսղեկ նշանակվում է քոլեջի տնօրենի հրամանով՝ հիմնական դասախոսական կազմից՝ հաշվի առնելով աշխատակցի փորձառությունը:

1.3. Կուրսղեկներ նշանակվում են առկա ուսուցման համակարգի հիմնական (ընդհանուր) և միջնակարգ(լրիվ) կրթության հիման վրա կազմված խմբերում:

1.4. Կուրսղեկների նշանակումը կատարելիս նվազագույն կցագրման միավոր համարվում է տվյալ մասնագիտության տվյալ կուրսը:

1.4. Կուրսղեկը նպաստում է ուսանողի համակողմանի զարգացմանը, ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակմանը կերպարի ձևավորմանը, մասնագիտական խորը և կայուն գիտելիքների, հմտությունների ձեռք բերմանը:

1.5. Կուրսղեկի գործունեությունը անմիջականորեն ղեկավարվում է ուսումնական մասի վարիչի կողմից:

1.6. Կուրղեկի լիազորությունները կարող են դադարեցվել՝

- կուրսղեկի կանոնակարգով սահմանված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու,
- քոլեջի տնօրենի, ուսումնական մասի վարիչի կողմից հիմնավորված պատճառաբանությամբ,
- ուսումնական խմբի ուսումնառությունն ավարտելուց հետո,
- անձնական դիմումի համաձայն

1.7. Կուրսղեկի լիազորությունների դադարեցման մասին որոշումն ընդունում է տնօրենը:

2. Կուրսղեկի հիմնական գործառույթները

2.1. Ուսանողների նկատմամբ ցուցաբերել տարբերակված մոտեցում՝ հաշվի առնելով նրանց տարիքային և անհատական առանձնահատկությունները, ձգտումները, նախասիրությունները:

2.2. Ստեղծել համերաշխ կոլեկտիվ՝ ուսանողների մոտ ձևավորելով ընկերասիրություն, փոխադարձ հարգանք և սեր:

2.3. Իրականացնել արտալսարանային աշխատանքներ, որոնք միտված են հայրենասիրության, բարոյահոգեբանական, գեղագիտական դաստիարակությանը:

2.4. Իրականացնել և ապահովել մշտական կապ ծնողական համայնքի հետ:

2.5. Ուսանողներին ծանոթացնել իրենց իրավունքներին և պարտականություններին, նրանց առնչվող կարգերին ու կանոնակարգերին, ՄՈՒՀ-ի ներքին կարգապահական կանոններին:

2.6. Համագործակցել այլ դասախոսների հետ:

2.7. Ուսանողների հետ իրականացնել անհատական և խմբային աշխատանքներ:

3. Կուրսղեկի իրավունքները

3.1. Անհրաժեշտության դեպքում մասնակցել կուրսի ցանկացած դասին:

3.2. Տնօրինությանը կամ մանկավարժական խորհրդին ներկայացնել առաջարկություն ուսման մեջ բարձր առաջադիմություն կամ հասարակական աշխատանքներում ակտիվություն ցուցաբերած ուսանողների խրախուսելու, կամ ՄՈՒՀ-ի կարգապահական կանոնները խախտած ուսանողներին կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ:

3.3 Դաստիարակչական կամ ուսումնական հարցերի հետ կապված ծնողին կանչել ուսումնական հաստատություն:

3.4. Գնահատել կուրսի ուսանողների վարքը:

3.5. Ուսանողներին տալ բանավոր զգուշացում:

4. Կուրսղեկի աշխատանքի պլանավորումը

4.1. Կուրսղեկի աշխատանքը պետք է կրի պլանային բնույթ: Կուրսղեկը պետք է կազմի իր կուրսի հետ տարվող աշխատանքների պլան, որտեղ.

- նշվում են իրականացվելիք միջոցառումներն ու աշխատանքները՝ կոնկրետ օրացույցային ժամկետներով,
- պետք է հաշվի առնվի ուսանողների տարիքային և ընդհանուր զարգացման մակարդակը,

4.2. Յուրաքանչյուր տարվա վերջում կուրսղեկը ներկայացնում է կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

«Մեհրաբյանի անվան

բժշկական քոլեջ» ՍՊԸ բժշկական քոլեջի

ուսումնական մասի վարիչ՝ /Հ.Ա. Բաբայան /